

ԱԼԻՇԱՆԻ «ԱՅՐԱՐԱՏ» Ը

Վաթսուն տարիներ առաջ, Հ. Ալիշան փակեց իր արձուարիքի աչքերը, յաւիտենականութեան մէջ բանալու համար: Ս. Ղազարու վանքին զանգակները տխուր ղողանջեցին, ծովէ ծով, հեռու, հայրենի լեռներուն մէջ տանելով իր մահուան բռնութիւնը:

Ինկած էր շուրջ դար մը վերջ, հայ գրի ու գրականութեան, հայ մտքի ու բանաստեղծութեան տիտանը «Հայ Նահապետը», 81 տարի կուրծք տալէ վերջ իր շուրջը չէր փոթորիկներուն, 81 տարիներ երազելով եւ մրմնջելով իր հեռու ու սիրելի հայրենիքը: Ս. Ղազարու խորհրդաւոր կղզեակը դարձած էր իր փոքրիկ հայրենիքը, եւ անոր խորհրդաւոր միայնութեան մէջ, երազած ու երգած իր հեռու, բայց սրտին մօտիկ հայրենիքը, Հայաստանը, միշտ յառած անոր սրտին վրայ կանգնած յաւիտենական Արարատին, որուն ձորերուն ու ամպածրար դադաթին վրայ կը կարդար հայ ժողովուրդին դարաւոր անցեալը:

Ու այս երազով եւ յաւիտենական տեսիլքով, նստած Ս. Ղազարի խոնարհ իր սենեակին մէջ, պրպտեց հայրենի հողն ու երկիրը, գետերն ու լիճերը, դաշտերն ու ձորերը, քաղաքներն ու աւանները, տաճարներն ու վանքերը, ծառերն ու ծաղիկները, կերտելու համար, իր ճարտար գրչով եւ ոսկեղինիկ լեզուով, Ս. Ղազարու դարաստանին մէջ, իր երազներով պարուրուած յաւիտենական «Այրարատ»ը, որով կորով ու սէր պիտի ներշնչէր, կրօնք ու հայրենասիրութիւն՝ եկող սերունդներուն:

Հ. Ալիշանի տեղագրական գործը շատ ընդարձակ է, «Այրարատ», «Սիսուան», «Սիսական» եւ «Շիրակ», որոնք Հայաստանի մէկ մէկ նահանգներուն մենագրու-

թիւններն են: Շատ ընդարձակ պիտի ըլլայ, այս ամէնը ներկայացնել իր մահուան 60ամեակին առթիւ. մենք պիտի ծանրանանք, իր «Այրարատ» տեղագրութեան վրայ, որ կրնանք ըսել թէ իր դրուստ գործոցն է, ճոխութեամբ եւ բովանդակութեամբ, եւ առաջինն իր ստեղծագործութեան:

«Այրարատ», անունը արդէն վեհութիւն եւ մեծութիւն կը ներշնչէ. պատկանելի հատոր մը, 560 մեծղի էջերով, պատկերազարդ, հայրենի լեռներուն ու գետերուն, լիճերուն եւ ձորերուն, եկեղեցիներուն եւ վանքերուն բազմաթիւ պատկերներով, նահանգներու յստակ եւ որոշ բաժանումներով:

Հ. Ալիշան յորինելու համար այս իր գործը, իր տրամադրութեան եւ աչքին առջեւ ունեցել է, ընդարձակածաւալ ծովանման մատենադրութիւն մը, նախնեաց գործերը, Սուրբ Ղազարու 3.000 ձեռագիրներու շարանը, հազարաւոր տեղագրութեան եւ անդիւր տեղագրութիւններ, օտար եւ հայ ուղեւորներու, բազմաթիւ յիշատակարաններ, արձանագրութիւններ եւ խաչքարեր. այս ամէնը Հ. Ալիշան իր քննութեան բովէն անցուցել է, մաղեր է ամէն մէկ տող ու գրութիւն. եւ ինչ անուն որ գտեր է մեր հայրենիքին սահմաններէն ներս, հոն իր «Այրարատ»ին մէջ գետեղեր է, զարմանալի ճշգրտութեամբ, եւ մարդարէական հոգիով. իր ժամանակ, անհամբեր ամբողջ գրական աշխարհը եւ հայ ազգը կը սպասէր իր այս գործին հրատարակութեան, որ ժամանակ մը ուշացել էր, ինչպէս ինքը կ'ըսէ, «չառ կամ սակաւ թերեւս անագանալ քան զակնկալութիւն սպասողաց»: Հ. Ալիշանի ժամանակը, հայ գրի եւ մտքի զարթոնքի չըջանն էր, հայ ազգա-

սիրութիւնը սկսած էր բորբոքիլ. եւ հայ ժողովուրդը այսպիսի գործի մը հանդէպ անտարբեր չէր կրնար մնալ: Հ. Ալիշան ահա իր այս գործով վար կ'առնէր հիմնաւորք վարագոյրը մեր պատմութեան վրայէն եւ ցոյց կու տար հայուն իր փառաւոր անցեալը: Այրարատի 560 էջերուն մէջ գետեղեր է 2.500 անուններ, քաղաքներ, զիւղերու, վանքերու եկեղեցիներու, բերդերու, եւ արձանագրութիւններու, նոյնչափ ալ անուններ եկեղեցական եւ քաղաքական անձերու, որոնք ապրել եւ գործել են այդ հողին վրայ:

Հ. Ալիշանի տեղագրութիւնները, եւ ի մասնաւորի իր «Այրարատ»ը զուտ տեղագրութիւնը չէ Հայաստան աշխարհին, կամ թուրքումը քաղաքներու եւ գիւղերու, այլ կենդանի պատմութիւնը եւ քաղաքակրթութիւնը հայ ժողովուրդին, որ դարերով ապրեցաւ Արարատի ստորոտը, սկսելով հին դարերէն մինչեւ իր օրերը:

Այսպէս կարելի է «Այրարատ»ը կոչել «Պատմութիւն Այրարատեան աշխարհին Հայոց»: Հ. Ալիշան իր մէջ կեդրոնացուցել է ուրիշ երկու մեծղի դէմքերու գործն ու յատկութիւնները Միթրաբեան վարդապետներու, Ինճիճեանի տեղագրութիւնը, «Ստորագրութիւն հին Հայաստանի», և Չամչեանի, եռհատոր «Պատմութիւն հայոց»ը. այս երկու գործերու մութիւն հայոց»ը. այս երկու գործերու համագրութեամբ է որ յորինած է իր Այրարատը, կամ Այրարատեան պատմութիւնը. բնական է շատ աւելի ընդարձակ եւ խոր զիտութեամբ՝ քան իր նախորդները:

1890ին կանգնած է «Այրարատ»ը, լոյս տեսնելով Ս. Ղազարու տպարանէն. կը բերելէր մեծ Ալիշանի սիրտը, տեսնելով իր «Այրարատ»էն հովեր կը բարձրանային ու կ'երթային հեռու հայրենի դաշտերուն եւ լիճերուն վրայ՝ զովացնելու հայ սիրտը, բարձրացնելու հայ միտքը:

Բայ «Այրարատ»ի մէկ էջը, հոն պիտի գտնես խոսքած ամբողջ հայ ցեղին պատ-

մութիւնը. հոն են խորենացին, Եղիշէն, Ղազար Փարպեցին, եւ մեր բոլոր հին պատմագիրները. Տիգրան հոն կը փառաւորուի մասնաւոր զրուարներով, հոն է խաչակիր թագով Տրդատ՝ իր փառքին մէջ, հոն է «Կարմիրն Վարդան» իր նահատակութեան դափնիով, վերջապէս հոն են մեր խոնարհ կոյսերը, Հռիփսիմէ եւ Սանդուխտ, իրենց փառապատկով, ու իր համանունը՝ Վանանդացի քաջարի Ղեւոնդ Երէցը:

Յստակ դադափար մը տալու համար «Այրարատ»ի մեծութեան, չէ կարելի անտեսել քանի մը մանրամասնութիւններ. Ալիշան երբ իր քննութեանց ընթացքին կը հանդիպէ որեւէ անունի մը, որ հայկական բուրում ունի, կանգ կ'առնէ, կը քննէ, կը խորանայ. այսպէս երբ կը խօսի Վանանդ զաւառին մասին, իր տրամադրութեան տակ առած անսահման առաջ մը, ամէն ինչ ամենայն ճշտութեամբ եւ մանրամասնութեամբ կը գետեղէ իր շրջանակին մէջ: Բայ էջ մը իր «Այրարատ»էն, ու ինչ մանրամասնութիւն. «Յարեւելից Կարուց եւ գրեթէ նորին հորիզոնական ուղղութեամբ, իբրեւ 10 միլիոն բացառոյն, ի սահման Շիրակայ ամբարտան երկու լեռինք, Եանիլէր աւան, մին մեծ կոչեցեալ, 2270 Չ. միւսն փոքր ի Մ. նորին 2086 Չ. յորոյ հս. կայ Խալիֆ օղլի տաճկաբնակ գիւղ, եւ ի սորին հս. Մշկու գետ կամ որպէս կոչեն յոգնարար, Մշկներ, եւ է հաւանօրէն Մշկուլիֆն հին, յիշեալ յարձանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Անույ, յամին 1165, եւ զի ընդ նմին յիշի Յամաճով, թուի ակնարկել ի ճահիճն՝ որ տարածանի ի հարաւոյ նորին, եւ ուր զարդիս արօտս իւրեանց վարձեալ է գեղջից ոմանց արեւելեան Շիրակայ...» (էջ 78-79):

Հոս Ալիշան Մշկու գիւղի անունէն կ'անցնի Մշկներին, հին կոչումով Մշակուլիֆ, զոր գտած է Անիի Ս. Գրիգոր եկեղեցիին մէկ արձանագրութեան վրայ՝ գրուած 1165ին. եւ որովհետեւ նոյն ար-

ձանադրութեան մէջ յիշուած կը գտնէ Յամաքաժով անուն մը եւս, որ հայկական է, կը ճշտէ նաեւ այդ Յամաքաժովին գերբը: Ասիկա աննշան գիւղի մը անունն մասին. իսկ երբ խօսի կարս քաղաքին եւ Վանանդ գաւառին մասին, Ալիշան կը ծովանայ, կը տարածուի, կը խանդավառուի, եւ կ'ընէ ամբողջ Վանանդ գաւառին տեղագրականն ու պատմականը, մինչեւ 1877ի ռուս թրքական պատերազմը՝ որ մղուեցաւ այդ քաղաքին տիրանալու համար. կը թուէ այդ պատերազմի պատճառները, ղեկավարները, եւ անոնց տարած յաղթանակները եւ պարտութիւնները, մինչեւ գալուստը հայազգի Լօռիս Մելիքովի, որ վերջնականապէս ջախջախեց Մուսթար փաշայի բանակը: Եւ որովհետեւ հոս խօսքը Վանանդի մասին էր, ահա հոն է իր անուանակից մեծ սուրբը Ղեւոնդ Վանանդագին, ու Ալիշան իր հոգեւոյն, սրտին եւ զգացումներուն հրահեղեղ ազդեւորները բացած՝ կը յօրինէ փառաւոր պատմական եւ բանաստեղծական գրութիւն մը Ղեւոնդ Վանանդացիի անուան շուրջ, անցնելով Վանանդէն մինչեւ Ծաւարձան՝ Վարդանանց հերոսական պատերազմը, անմահացնելով Ղեւոնդի պատմական դերը:

Այսպէս Հայր Ալիշան կրկին անմահացուցեր է մեր ազգային հերոսները. կեանք տուեր մեր աւերակ տաճարներուն, եւ խօսք ու ձայն՝ մեր մշտամըմունջ վանքերուն. քալած է վանքէ վանք, աւերակէ աւերակ, քննած ու տեղագրած իր «Այրարատ»ին մէջ:

Ու այսօր մենք ունինք, մեր պատմութեան պարծանք «Այրարատ»ը. որ պատմագիրը կամ աշխարհագիրն ալ որ ուզէ կամ ուզած է գրել երկու տող մեր աշխարհին մասին եւ կամ մեր հայրերուն մասին, անպատճառ պէտք է որ գիտէ Ալիշանի գործերուն, իր Այրարատին, Սիսուանին, Սիսականին եւ Երբակին. անվիճելի հեղինակութիւն մըն է այն, թէ

եւ ոմանք ուղեցին նսեմացնել զայն. բայց ո՛չ. Հ. Ալիշան արեւ մըն է, ո՛վ կրնար արեւին առջեւ չուր գնել. ժամանակաւոր սեւ ամպեր կու գան ու կ'անցնին, բայց Հ. Ալիշանի փառքը կը մնայ անստուեր: Հ. Ալիշան մեր պատմութեան մէջ անհաւասար կը մնայ, ան իր ամբողջ կեանքով նուիրուեցաւ հայ ազգին բարձրացումին, գիշեր ու ցերեկ աշխատեցաւ, եւ ինչպէս տեղ մը կը գրէ, «ոչ խնայելով աշխատ առնել եւ զճարտարաւ ճարգ շիջելափառ աշացս, յերկար թարթափմամբ ի քարտէնս»: Այս ըսել կ'ուզէ թէ այն իր աչքերուն լոյսը տուած է, ձեռագիրներուն մէջէն քաղելու համար հայ պատմութեան ատաղձը, եւ մշտաբերուն աշխատութեամբ դրած իր «Այրարատ»ը:

Եթէ կան ալ իր գործին մէջ փոքրիկ թերութիւններ, այդ ալ իր ժամանակի մտայնութեան արդիւնք է. այն քննական ոգին որ այսօր գոյութիւն ունի՝ այն ժամանակ դեռ կը կաղար: Բայց Ալիշան իր ուղղամտութեամբ եւ ուղղատեսութեամբ պատգամ մըն էր ամբողջ աշխարհին, յարգուած եւ զնահատուած անձնաւորութիւն մը, ոչ միայն հայ շրջանակին մէջ, այլ եւ օտարներու առջեւ, շատ մը աշխարհագրական ընկերութիւններու անդամ եւ հմտալից բանախօսութիւններով ծանօթ դէմք մը:

Հ. Ալիշան ծրագրած էր գրել մեր 15 նահանգներու պատմութիւնը, բայց դեռ բախտաբար իր բեղնալից կեանքը կարճ եկաւ այդ մեծ ծրագիրները ի գլուխ հանելու համար. սակայն այսչափն ալ արդէն շատ է. ոչ ոք իրեն նման այնքան բեղուն եղած է. եւ այսքանը բաւական են որ անմահացնեն իր անունը, եւ իրաւունք տան որ իր ալ անդրին կանգնի Մեւրոյի եւ Սահակի կողքին՝ իր սիրած հայրենիքին մէջ, օր մը, իր աչքերը յառած վեհափառ «Այրարատ»ին:

Հ. ՄԻՒԲԱՅԵԼ ԶՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՆ ԳՐԶԱԳՐԻ ՍԸ ՀԱՏՈՒԿ ՏՈՐՆԵՐ

Հ. ԱԼԻՇԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Մեր բանասիրութեան եւ պատմութեան մէջ նիւթ չկայ որ երջանկայիշատակ բազմարդիւն վաստակաւորն Հ. Ղեւոնդ Ալիշան քիչ կամ շատ մշակած չըլլայ: Իր ՀԱՅԲՈՒՍԱԿԸ, որ հրատարակուեցաւ Վենետիկ Ս. Ղազար 1895ին, բազմաշխատ գործ մըն է, որուն ի տես կարելի է որ Հիւանանք տքնաջան Միլիթարեան չօր համբերութեան, կամքին եւ կարողութեան վրայ:

Անտարակոյս աշխատութիւնը ունի արդի տուեալներով լրացուելի կէտեր: Սակայն պէտք է նկատի ունենալ որ իր ժամանակուան պայմաններուն եւ ազդեւորներուն համեմատութեամբ՝ գործը մեծապէս զնահատելի աշխատութիւն մըն է: Նորայր Ն. Բիւզանդացի իր երկաւ: ՄԱՅԻ ԺԱՆՈՒՍՈՒԹԻՆ ՀԱՅԲՈՒՍԱԿԻ մանրակրկիտ գործով ոչ թէ Հ. Ալիշանի կոթողային գործին արժէքէն որեւէ բան նուազեցուց, այլ պարզապէս ցոյց տուաւ Հ. Ալիշանի ՀԱՅԲՈՒՍԱԿԻ անգնահատելի կարեւորութիւնը եւ արժէքը*:

Տարակոյս չկայ որ Հ. Ալիշանէն առաջ եւ շատ առաջ եղած են բուսարան հայ գիտնականներ: Ամիրտովլաթ բօխլի Ագիտնականներ, ԺԵ. Ղարու վերջը, կրնանք մասնացին, ԺԵ. Ղարու վերջը, կրնանք հայ բուսագէտ մը նկատել: Սակայն տուեալներ ունիմ հաստատուելու համար որ զուգէ իրմէ ալ առաջ ունեցած ենք հայ բուսարան մը, որ այժմ մեզի բոլորովին անծանօթ կը մնայ:

Ասկէ տասնեակ մը տարիներ առաջ, Պէյրութի մէջ, տեղացի օտար հնավաճառ մը ինծի առաջարկեց տասներկու կի-

սատ եւ ամբողջական թերթերէ բաղկացեալ մնացորդներ բուսարանական մեծարժէք գործի մը, որուն հնութիւնը անտարակոյս մինչեւ ԺԳ. կամ ԺԴ դար կը հասնի: Թերթերը, որոնց եղբայրները ժամանակէ եւ գործածութենէ մաշած ծուատնակէ եւ գործածութենէ վարպետօքն, ուսած են, կը պարունակեն վարպետօքն, գեղեցիկ, բնական եւ ճաշակաւոր կերպով դժուած, արմատէն մինչեւ տերեւը, բոյսեր, ծաղիկներով եւ հոնտերով ալ միասին երբեմն: Թուղթէ այս թերթերը կ'երեւի թէ խոնաւ տեղ մնացած են երկար ատեն եւ գունաւոր ջրաներկ գծադրութիւնները խոնաւութենէ իրարու վրայ տպաւորուած են յաճախ յստակ կերպով:

Եթէ ոչ հեղինակը, սակայն անտարակոյս գրիչ-ծաղիկակարիչը արար մը կամ արարագէտ մը՝ արարագէտի մը համար պատրաստած է գործը, քանի որ իւրաքանչիւր թերթի վրայ առանձին ներկայացուած, իւրաքանչիւր բոյսի մասին՝ կայ արարատառ անունը եւ երբեմն երկար ծանօթութիւններ:

Բնական է ինչ որ աւելի շահեկան կ'ընէ այդ բուսարանական գրչագիրը մեզի համար, այն է՝ որ իմ ձեռքս ինկած այս թերթերու խումբին մէջ, որոնք անտարակոյս նոյն գրչագրէն ելած են, կան չորս թերթեր՝ որոնց վրայ կայ նաեւ, հայերէն հին նոտագրով, բոյսերուն անունները: Ասիկա ցոյց կու տայ անկա-

(*) Ցաւալի է որ ըրաւ քննադատութիւններ՝ ոճով մը, որ ներքին չէին: